ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 9

<<15>> հունվարի 2021 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԿԱՊՍ) 08-052-0038-0007, 08-052-0038-0008, 08-052-0038-0009 ԿԱԴԱՍՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ 0.11777 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԵՏՈՆՅԱ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի ԹԻՎ 60 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի>> 2-րդ և 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 112 որոշումը **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի վարչական սահմաններում (բնակավայր՝ Կապս) 08-052-0038-0007, 08-052-0038-0008, 08-052-0038-0009

կադաստրային ծածկագրերով 0.11777 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ճանաչել Մարմաշեն համայնքի սեփականությունը:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի (բնակավայր՝ Կապս) 08-052-0038-0007 08-052-0038-0008, 08-052-0038-0009 կադաստրայն ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.11777 հեկտար հողամասի վրա 1990 թվականին ինքնակամ կառուցված 62.91 և 128.00 քառակուսի մետր արտաքին մակերեսով բետոնյա հիմքերը ճանաչել օրինական և համարել Մարմաշեն համայնքի սեփականությունը:

3.Որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենդրությամբ սահմանված կարգով ենթարկել պետական գրանցման:

4.Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևի համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում է որոշմանը:

5.ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի (բնակավայր՝ Կապս) սեփականության իրավունքով պատկանող 08-052-0038-0007, 08-052-0038-0008, 08-052-0038-0009 կադաստրային ծածկագրերով 0.11777 հեկտար հողամասի վրա առկա բետոնյա հիմքերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին>> թիվ 60 որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

15.հունվարի.2021 թվական
Գյուղ Մայիսյան